

բոյն թովմայի, և յաստուածային իրաւանց: Արժան է գիտել, ասէ նա ինքն, եթէ աւերութիւն և իշխանութիւն մուծեալ եղեն ի մարդկային իրաւանց. այլ բաժանումն հաւատացելոց և անհաւատից է յաստուածային իրաւանց:

Այսպէս ահա կը կատարէ Մովսէս երկրիս վրայ մարդկանց ընդհանուր պատմութիւնը, սկսելու համար անմիջապէս յետոյ Արքահա՛մու նախահարց սերնդեան երբայական պատմութիւնը, որ և իր ազգին և այս շրջանին մէջ կը մնայ այնուհետև:

Կ Ե Ն Ս Ա Գ Ր Ա Կ Ա Ն

Շ Լ Ի Մ Ա Ն

Նշանաւոր հնախօսն Շլիման մեռաւ մօտ ատեններս 'ի Նափոլի ուսկից կ'անցնէր 'ի Յունաստան երթալու համար:

Ենած էր յամի 1822, Մէքլէմպուրկ — Շվէրին գաւառին Նիւ — Բիւ — քով քաղքին մէջ: Վաճառականական և ճարտարարուեստական ուսմանց միայն զբաղած ըլլալով, 'ի սկզբան ջանաց իւր գործը յաշողջընել համեմունք և դեղեր վաճառելով: Բայց պատահար մը զինքը անկարող ըրաւ ծանր բեռներ վերցնելու. որով բռնադատուեցաւ ձգել զվաճառականութիւն, և 'ի Համպուրկ նաւ մը մտաւ իբրեւ ծառայ, որ պիտի երթար 'ի Վենեցուելա: Այս նաւն ալ թէքսէլ կղզոյն եղերքը խրեցաւ մնաց: Շլիման հիւանդացաւ, և Ամսդէրտամի հիւանդանոցին մէջ զրուեցաւ, և յետ բժշկութեանն, 'նոյն քաղքին վաճառականութեան նշանաւոր տեղ մը մտաւ: Իւր արուեստին պարտքերը լիովին կատարելով հանգերձ, անգղիերէն, գաղղիերէն, հօլանտերէն, սպանիոլերէն, իտալերէն և ուստերէն լեզուները սորվեցաւ, և ապա 'ի Բեթրապուրկ զրկուեցաւ իբրեւ ներկայացուցիչ 'նոյն վաճառականութեան տան, և հոն ոտակաւ ժամանակի մէջ մեծ յաշողութիւն գտաւ:

Իւր պաշտամանց պատճառաւ շատ ճամբորդութիւններ ըրաւ 'ի Շուէտ, 'ի Տանիմարքա, յիտալիա, յեգիպտոս, յԱսորիս և 'ի Յունաստան: Այս ուղևորութիւնք, և 'նոյն լեզուի ունեցած հմտութիւնըն՝ կամաց կամաց հետաքրքրութիւն մը յառաջ բերին 'ի նմա, և հնութեանց զբաղելու փափաք մը ունեցաւ, և այն ալ 'ի մասնաւոր յունական հնութեանց: Ուստի թողուց վաճառականութիւնը, և ինքզինքը բոլորովին տուաւ ուսման և ճամբորդութեան, և յետ պարտելու ամէն տեղ, գնաց նաև 'ի Գորֆու, յիթակէ, 'ի Մոռէա, և փոքուն Ասիոյ եզերքը, ուր բոլոր իւր ուշադրութիւնը և քննութիւնքը

գարձուց Հոմերոսի դիցազանց պատերազմաց հանգիստեղեաց վրայ :

Իւր կնոջը հետ, որ յոյն էր, իրեն ծախքով հարիւր յիսուն գործաւորաց գլուխ կեցած Հիսարլըքի հողը քննեց 1870 — 1882, և հոն վեց հաւ վրայէ վրայ կառուցեալ քաղաքաց հետքերը գտաւ : Կարծեց որ հին իլիոնի հետքերն ալ գտաւ այն շեղակուտեալ աւերակաց երկրորդին մէջ : Իւր գտած հնագիտական գանձերը զրկեց ի Պերլին, և հոն ազգագրական թանգարան մը շինուեցաւ անոնցմով, որ այժմ իւր անուամբ կը կոչուի :

Յամի 1876 Միկէնի Ակրոպոլին աւերակներն ալ գտաւ : յամի 1884 և 1885 Տիւրոսինը : Յամի 1871 յԱթէնս հաստատած էր իւր բնակութիւնը :

Ջանազան գրուածոց մէջ նկարագրած է իւր ճամբորդութիւնքը և գտածները, և այս գրուածներն կը կոչուին այն քաղաքաց և տեղեաց անուամբ՝ զորս քննեւ և գտեւ է :

ՕԳՏԱԻ ՖԵՕՅԷ (1821 — 1890)

(Գտաւ Ֆէյէ մեռաւ 1890 զեկտեմբեր 10ին) : — Եթէ յիրաւի դրական աշխարհքն կորսնցուց իւր նշանաւոր ներկայացուցչաց մին, այլ և հոգեւորականն պէտք է պատուէ այս ի հող իջած անձը՝ իրրկ իւր արիասիրտ պաշտպանաց մին : Անտարակոյս Օգտաւի երկասիրութեանց մէջ կան շատ պարսաւելի կտորներ, վասն զի անոնց մէջ կենաց ամենայն գծուարին և անտանելի դրից և պարագայից լուծումն կու տայ անձնապանութեան վարդապետութեամբ : և այս բանս առանձինն կերպով կը տեսնուի Այրի (Veuve) Պատիւ Արտանտաւորի (Honneur d'artiste) կոչուած գրող մէջ : Բայց ասոր փոխարէն, երբ նիւթապաշտութեան և անոր վտանգաց գէմ կը խօսի՝ յայտնի կերպով կը տեսնուի անոր եռանդն և համբոյժը Աստուծոյ գոյութեան, հոգւոյ աննիւթականութեան և անմահութեան և ազօթից զօրութեան վրայ : Բաւական է իրեն երկու գլխաւոր գործերը Սիբիլայ (Sibylle) և Մեռեալն (la Morte) կարդալ, տեսնելու համար թէ ինչպիսի այրական և գրեթէ քրիստոնէական ձիւրքեր կան անոնց մէջ : Այսպիսի երկասիրութեանց հեղինակն պէտք էր քրիստոնէաբար մեռնէր : և յիրաւի մեռաւ՝ ի երախտագիտութեամբ գրկելով զքահանայն՝ որ Աստուծոյ կողմանէ իրեն թողութիւն տաւ իւր եկած էր :

Ֆէյէյի գրուածոց վրայ դիտողութիւններ ընելէն առաջ, կը փափաքիք հետեւեալ գէպքը պատմել :